# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-օգոստոս)

ԱԺԲԳ

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 110.4%, 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 114.0 %, իսկ 2021թ. հունվար-օգոստոսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ.հուվար-օգոստոսին կազմել է 1 տրլն 615 մլրդ 332,3 մլն դրամ, ինչը 2022 թնույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 29 մլրդ 853.7 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 229մլրդ 475.8 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-օգոստոսին կազմել է 283 մլրդ 569.7 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 40 մլրդ 475 մլն և 78 մլրդ 243.8 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-օգոստոսին կազմել է 3 տրիլիոն 245 մլրդ 620.2 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 639 մլրդ 354. մլն և 1 տրլն 171մլրդ 102,2 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-օգոստոսին կազմել է 1 տրիլիոն 958 մլրդ 63,7 մլն դրամ, ինչը 2022 և 2021թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 371 մլրդ 056 մլն և 766 մլրդ 27,6 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 99.9 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109,2 %-ի և 101 %-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 117.3 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 114.2 %-ի և 107.3-ի %-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 123.1 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 113.6 %-ի և 107.1 %-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 114.8 %, 2022 և 2021 թվականների ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 127.1 %-ի և 105.3%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-օգոստոսին կազմել է 314 մլրդ 641.2 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 49 մլրդ 133.9 մլն դրամով, 2021 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 78 մլրդ 479.8 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-օգոստոսին կազմել է 1 տրլն 68 մլրդ 396.5 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թ նույն ժամակաշրջամնների համեմատու-թյամբ ավել է համապատասխանաբար 24 մլրդ 26.2 մլն և 241 մլրդ 647.5 մլն դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակ արարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 2023թ. հունվար-օգոստոսին կազմել է 212 մլրդ 657 մլն դրամ, (ընթացիկ գներով), ինչը 2022թ. ցուցանիշից պակաս է 6 մլրդ 433.8 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 32 մլրդ 10.2 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուլվար-օգոստոսին կազմել է 19մլրդ 637.6 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 687.8 մլն և 4 մլրդ 444.2 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 94.9%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 92.1%-ի և 103.3 %-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսի 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 100.8 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 118.9 %-ի և 98.8 %-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմաբ կազմել է 103.3 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.2 %-ի և 107.6 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 105.9 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.9%-ի և 107.2%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-օգոստոսին կազմել է 180 մլրդ 33,4 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 12 մլրդ, 631.5 մլն և 19 մլրդ 339.4 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-օգոստոսին կազմել է 413 մլրդ 405.3 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021 թ,ի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համա պատասխանաբար 141 մլրդ 75 մլն և 208 մլրդ 206.8 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայություննրի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-օգոստոսին կազմել է 517 մլրդ 113,8 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանա կաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 36 մլրդ 317 մլն և 205 մլրդ 302 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 107,1%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.4 %-ի և 65.2 %-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 151,7 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 132.7 % և 110,9 %-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-օգոստոսին 2022թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 93.8 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 143.5%-ի և 102.5 %-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. օգոստոսին 2022թ. օգոստոսի նկատմամբ կազմել է 103.1%, 2022թ. օգոստոսին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 108.4%, 2021թ. օգոստոսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 106.4%: ՍԳԻ-ն 2023թ. օգոստոսին 2022թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 96.8%, 2022թ. օգոստոսին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ` 105 %, 2021թ. օգոստոսին` 2020թ.դեկտեմբերի նկատմամբ` 103,7%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 1 տրլ 306 մլրդ 98 մլն դրամ, ինչը 172 մլրդ 655 մլն դրամով կամ 15.2 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 100 մլրդ 622 մլն դրամով կամ 8,3%-ով 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 64159 մարդ, ինչը 12591 մարդով կամ 16.4%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 26145 մարդով կամ 29 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 44429 մարդ, ինչը 7421մարդով կամ 14.3 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 16572 մարդով կամ 27.2 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

## ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




## ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվար-օգոստոսին կազմել է 11 մլրդ 995.7 մլն. դոլար, ինչը 4 մլրդ 156.7 մլն դոլարով կամ 53 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 6 մլրդ 986. 6 մլն. դոլարով 139.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը 2023թ. օգոստոսին կազմել է է - 3 մլրդ 77.9 մլն դոլար, ինչը 1 մլրդ 115 մլն դոլարով կամ 56.8 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 892 մլն դոլարով կամ 159.7 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանաման ծավալը (ՖՕԲ գներով) 2023թ. օգոստոսին կազմել է 4 մլրդ.458.9 մլն դոլար, ինչը 1 մլրդ 520.9 մլն.դոլարով կամ 51.8 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 546,9 մլն դոլարով կամ 133.2%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. օգոստոսին կազմել է 7 մլրդ 536,8 մլն դոլար, ինչը 2 մլրդ 635.8 մլն. դոլարով կամ 53,8 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 4մլրդ 439.8 մլն դոլարով կամ 143.4 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

## Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




## Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ




Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվար-օգոստոսին կազմել է 262957 դրամ, ինչը 38986 դրամով կամ 17.4 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 64589 դրամով կամ 32.6 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվար-օգոստոսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 71 մլրդ 572.3 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝68 մլրդ 786.8մլն դրամ, արտաքին աղբ յուրների հաշվին ֆինանսավորումը՝ -140,359.1 մլն դրամ: 2022թ. հունվար-օգոստոսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 53 մլրդ 708.7 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 70,772.1 և -124,480.8 մլն դրամ: 2021թ. հունվար-օգոստոսին պետական բյուջեի պակասուրդը կազմել է -143մլրդ 495.8 մլն դրամ, ընդ որում ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -107,61,8 և 250,557.6 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ